ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՏՆՕՐԵՆ՝ Մ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

30.08.2023թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՀՐԱԶԴԱՆԻ N2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

ԴԱՍԱՐԱՆ՝ III «ա»

ԴԱՍՂԵԿ՝ Կարինե Բարսեղյան

ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մեր դասարանում սովորում են 25 աշակերտ՝ 15 տղա, 10 աղջիկ: Դասարանում տիրում է ջերմ և ընկերական մթնոլորտ, որտեղ բոլոր աշակերտները իրենց զգում են հարազատ միջավայրում: Նրանք բավականին աշխույժ և անկաշկանդ երեխաներ են, ազատ արտահայտում են իրենց կարծիքները, պահպանում բարեվարքության կանոնները: Բոլորն էլ սիրում են դպրոցը, հաճախում են հաճույքով և մեծ պատասխանատվությամբ: Կան աշակերտներ, ովքեր ունեն ուսումնական որոշակի խնդիրներ, բայց դրանք հաղթահարելի են և ժամանակի ընթացքում կշտկվեն: Պատրաստ են համագործակցության ինչպես միմյանց, այնպես էլ ուսուցիչների հետ:

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաքացիական, բարոյական

Խնդիրները՝

Քաղաքացիական պատասխանատվության, արժանապատվության ձևավորում, հարգանք իր երկրի մշակույթի և պատմության հանդեպ, խթանել բարոյական վարքի ձևավորմանը:

Հոգևոր դաստիարակություն

Խնդիրները՝

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

Գեղագիտական դաստիարակություն

Խնդիրները՝

Զարգացնել գեղեցիկը տեսնելու, զգալու, ինչպես նաև ստեղծելու կարողություններ:

Ֆիզիկական առողջության

Խնդիրները՝

Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների բացասական ազդեցությունների գիտակցում և օրինակելի վարքագծի դրսևորում, ֆիզիկական կոփմանն ուղղված միջոցառումների նախաձեռնում:

Աշխատանքային դաստիարակություն

Խնդիրները՝

Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում:

Իրավական դաստիարակություն

Խնդիրները՝

Զնավորել սեփական իրավունքներն ու պարտականությունները ճանաչելու կարողություններ:

Իրավական գիտակցության և հանդուրժողականության խթանում:

Էկոլոգիական դաստիարակություն

Խնդիրները՝

Բնության արժևորում և հոգատար վերաբերմունքի ձևավորում:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Խնդիրները՝

Զնավորել հայրենիքի նկատմամբ պատասխանատու վերաբերմունք՝ հիմնված անվերապահ սիրո և հարգանքի վրա, ակնածանք՝ հայ ազատամարտիկների նկատմամբ, ձգտում՝ կատարելու հայրենանվեր քայլեր:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

	ԹԵՄԱՆ	ՕՐԸ
1.	Դասագրքերի բաշխում: Զրույց գիտելիքի օրվան նվիրված, զրույց աշակերտների սանիտարահիգիենիկ պակմանների պահպանման մասին Զրույց «Համագործակցություն»	06.09.
2.	Դասարանի հերթապահության կազմում: Վերահսկել դասագրքերի պահպանումը, Զրույց «Օրվա ռեժիմի ճիշտ կազմակերպում», կազմել օրինակելի օրվա ռեժիմ	13.09.
3.	Դասասենյակի կանաչապատում, ծաղիկների խնամք, զրույց «ինչո՞ւ է անհրաժեշտ օդափոխել սենյակը» Զրույց «Ես քաղաքացին եմ անկախ Հայաստանի»	20.09.
4.	Դասարանական կարգապահական կանոնների՝ աշակերտների հետ համատեղ մշակում, լուսակիրով խաղերի կազմակերպում, Զրույց «Լուսակիր»	27.09.
5.	Իրավունքների և պարտականությունների մասին պաստառի	04.10.

	ձևավորում, քննարկման կազմակերպում Զրույց «Երեխաների իրավունքներ»	
6.	Կարգապահական հարցերի քննարկում, արդեն մշակված կանոնների վերանայում, պահպանման վերահսկում Զրույց «Խնդիրների համատեղ լուծում»	11.10.
7.	Վերհիշել գրադարանից օգտվելու կարգը Զրույց «Ի՞նչ գիտեք ճանապարհային երթևեկության կանոնների մասին»	18.10.
8.	Վերահսկել դասագրքերի պահպանումը, կազմակերպել վերանորոգումը՝հարկ եղած դեպքում, պահպանել վարվեցողության կանոնները Զրույց «Հանդուրժողականություն»	01.11.
9.	Դասարանը նախապատրաստել ջեռուցման շրջանին, առողջության և սպորտի փոխկապակցվածության մասին քննարկում Զրույց «Բանակցություններ»	08.11.
10.	Կարգապահական կանոնների վերահսկում Զրույց «Ինչպես անցնել փողոցը», «Անվտանգ երթևեկություն» պաստառի պատրաստում և քննարկում, թեմային առնչվող տեսաֆիլմի դիտում	15.11.
11.	Ծանոթացնել դպրոցի տարհանման պլանին։ Զրույց «Արտակարգ իրավիճակների ազդարարումը և բնակրության գործողությունների հաջորդականությունը»	22.11.
12.	Սովորողների սանիտարահիգիենիկ վիճակի ստուգում Զրույց «Աշակերտների տարրական գործողությունները կենցաղային վտանգավոր իրադրություններում»	29.11.
13.	Զրույց-քննարկում՝ ինչպես օգնել ընկերոջը, Ուսուցողական խաղ՝ «Ճանապարհային երթևեկություն» Զրույց «Խաչմերուկների տեսակները փողոցում»	06.12
14.	Կոլեկտիվի գաղափարի ընկալման նպատակով՝ կազմակերպել խմբային աշխատանք «ինչպես գտնել իսկական ընկերոջ» Դասարանի նախապատրաստում Ամանորին Զրույց «Միջմշակութային փոխըմբռնում»	13.12.
15.	Նախապատրաստել նամակներ Ձմեռ Պապիկին, կազմակերպել քննարկում «Ամանորյա հրաշքներ» Զրույց «Արդյունավետ հաղորդակցում»:	20.12.
16.	Կազմակերպել զրույց քննարկում «Առողջ ապրելակերպ» Զրույց «Շրջակա միջավայրը և նրա բաղադրիչները»	10.01.
17.	Տարհանման կանոնների վերհիշում, անվտանգության կանոններիպահպանում Զրույց «Սուր կենցաղային իրադարձությունները և դրանց ազդեցությունը»	17.01.
18.	Հայոց բանակի կազմավորման և կարևորության մասին քննարկում,հերոսների մասին տեսաֆիլմի դիտում Գործնական պարապմունք։ Խաղ «Ճանապարհային երթևեկությանկանոններ»	24.01.
19.	Դասագրքերի վիճակի ստուգում։ Բանավեճ՝ պահպանենք բնությունը, պահպանենք առողջությունը, Զրույց «Բնության վերամշակողներ»	31.01.
20.	Մշակել վարվեցողության կանոններ՝ «Բարեկիրթ ասպետ և օրիորդ»,հետևել դասասենյակի սանիտարահիգիենիկ վիճակին Զրույց «Սեռային /գենդերային/ խնդիրներ»	07.02.
21.	Հետևել դասարանի սանիտարահիգիենիկ վիճակի պահպանմանը։ Բանավեճ՝ վատ սովորույթներ, ինչպես պայքարել դրանց դեմ կամ խուսափել դրանցից Զրույց «Շրջակա միջավայր»	14.02.

22.	Ստուգել դասագրքերի վիճակը, անհրաժեշտության դեպքում կազմակերպել վերանորոգում, ճիշտ վարվեցողության կանոնները հասարակական վայրերում քննարկում -բանավեճ Զրույց «Ինչպես օգտվել տրանսպորտից»	21.02.
23.	Ուսուցողական դաս՝ տեսաֆիլմի դիտում, քննարկել Եզոպոսի և Վ.Այգեկցու առակները Զրույց «Աշակերտների տարրական գործողությունները կենցաղային վտանգավոր իրադրություններում»	28.02.
24.	Դասագիքերի պահպանման վերահսկում, համատեղ աշխատանքների կազմակերպում՝ խմբային աշխատանքու աշխատանքի բաժանման կազմակերպում Զրույց «Մասնակցություն՝ ակտիվ քաղաքացիական դիրքորոշում»	06.03.
25.	Վերահսկել դասասենյակի սանիտարահիգիենիկ վիճակը, ճանապարհային երթևեկության կանոնների վերաբերյալ տեսաֆիլմի դիտում, Զրույց «Հետիոտնը փողոցում»	13.03.
26.	Առողջության և սպորտի սերտ կապերի բացահայտում քննարկմանմիջոցով Զրույց «Ինքնօգնության և փոխօգնության տարրերը կենցաղային իրադրություններում ստացած վնասվածքների դեպքում»	20.03.
27.	Կարգապահական կանոնների վերահսկում, հարկ եղած դեպքում դրանց վերանայում և փոփոխում, քննարկման կազմակերպում՝ առողջ մարմնում առողջ հոգի Զրույց «Միջնորդություն»	03.04.
28.	Կոլոկտիվի գաղափարի ձևավորում՝ ուսուցողական խաղերի միջոցով, փոխօգնության գաղափարի ձևավորում, ուսուցողական մուլտֆիլմերի քննարկում Զրույց «Էկոգանձատուփ»	10.04.
29.	Կազմակերպել քննարկում՝ համակարգչից օգտվելու և անվտանգության պահպանման կանոնները, ցուցադրել հիմնականկետերը, որոնց պետք է ուշադրություն դարձնել կայք մուք գործելիս Գործնական աշխատանք	17.04.
30.	Դասարանի սանիտարահիգիենիկ վիճակի վերահսկում, վերհիշել տարհանման կանոններն ու կարգը Զրույց «Սուր կենցաղային իրադարձությունները և դրանց ազդեցությունը»	01.05
31.	Մեր հերոսների հետքերով՝ նկարների ցուցադրում, տեսաֆիլմի դիտում. դերային խաղի միջոցով ստեղծել կոնֆլիկտային իրավիճակ և գտնել լուծումներ Զրույց «Կոնֆլիկտների հաղթահարում»	08.05.
32.	Դասարանական կանոնների վերահսկում, դերային խաղեր երթևեկության կանոնների պահպանման վերաբերյալ Զրույց «Չկարգավորվող խաչմերուկներ: Դրանցից օգտվելու կարգը»	15.05.
33.	Դասագրքերի նախապատրաստում դպրոցի գրադարանին հանձնելու, խմբային քննարկման միջոցով վերհանել ջերմոցային էֆեկտի բացասական ազդեցությունը, դիտել տեսաֆիլմ՝ բնության աղտոտման կանխարգելման նպատակով Զրույց «Ջերմոցային էֆեկտ»	22.05.
34.	Էքսկուրսիա	24.05.

ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐ

	ՆՊԱՏԱԿԸ	ԷՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ /նշել կետերով/	ՕՐԸ
1.	Սերտացնել կապը գրադարանի և գրքերի հետ	Կոտայքի մարզային գրադարան	29.09.
2.	Մեր արթնացնել բնության նկատմամբ	1. Այցելություն բնության թանգարան 2. Բնության թանգարան 3. Կինոթատրոն	27.10.

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

	ԹԵՄԱՆ	ՕՐԸ
1.	Գիտելիքի և դպրության օր	01.09.
2.	Ամանորյա տոնահանդես	22. 12.
3.	Հայկական բանակ	29. 01.
4.	Հովհաննես Թումանյան և գրքի տոն	19.02.-21. 02.
5.	Մայրության և գեղեցկության տոն	07. 03.

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1	ՕՐԸ
ՕԳՈՍՏՈՍ	ՕՐԱԿԱՐԳ *1. Ծնող-խորհրդի ընտրություն* *2. Կազմակերպչական խնդիրների քննարկում* *3. Դասագրքերի պայմանագրերի կնքում*	30. 08.

	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2	ՕՐԸ
ՍԵՊՏԵՄԲԵՐ	ՕՐԱԿԱՐԳ 1. Ուսումնական խնդիրների քննարկում 2. Կազմակերպչական խնդիրների քննարկում	13. 09.

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐ

	Օրը	Առարկան, դասավանդող ուսուցիչը	Դասի թեման	Դասալսման նպատակը
1.	14.09.	Անգլերեն, Նելլի Հարությունյան	Numbers	Աշակերտների ներգրավվածությունը դասին
2.	28.09	Ռուսաց լեզու, Մ. Մանուկյան	Друзья.	Աշակերտների ուսմնական խնդիրների բացահայտումը տվյալ առարկայից
3.	02.10.	Տեխնոլոգիա. Ս. Մանուկյան	Ապլիկացիա փայլաթիթեղով :	Բացահայտել

				յուրաքանչյուր աշակերտի կարողությունները
4..	10.10.	Ֆիզկուլտուրա, Մ. Գրիգորյան	Ընդհանուր զարգացնող վարժություն-ներ. մարզափայտերով, օղերով, գնդակ-ներով, համալիր վարժություններ: Կեցվածքի ձևավորման վարժություն-ներ: Շնչառական վարժություններ:	Բացահայտել երեխաների ակտիվության և ներգրավվածության մակարդակը:

ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

	ԹԵՄԱՆ	ՕՐԸ
1.	Գիտելիքի և դպրության օր	01.09.
2.	Անկախության տոնին նվիրված տողան	20. 12.